

Հուրեր Ամմանի Ս. Թադէոս Եկեղեցւոյ Գործունէութեանէն

Մարտ ամսուն, Ամմանի Ս. Թադէոս Եկեղեցւոյ մէջ աւարտեցան տաճարի պատուհաններու բարեգարդման աշխատանինները, որը կարելի եղաւ իրագործել՝ գաղութաբնակ ազգասէր Տիար Գէորգ Տագէսեանի իշխանական նույրատուութեամբ:

Երկրայափական եւ գեղարուեստական աշխատանինները վստահուած էին գաղութիս շնորհալի զաւակներէն՝ Օր. Միլվա Ճամպազեանին, որ գիտաց Հայկական ոնով եւ նուրբ ճաշակով՝ գունաւոր խեցապակիններու վրայ Հայ իին մանրանկարչութեան օրինակները արտաքրել՝ նոր շուրջ եւ պերճան հաղորդելով:

Ապրիլ ամսուն, Ցորդանանահայ Եկեղեցաւոր Տիկ. Զարուհի Փելքէնեանի բարերարութեամբ Ս. Թադէոս Եկեղեցւոյ մէջ տեղադրուեցաւ Դասը եւ Ատեանը բաժնու երկարէ եւ պղինձէ շրջափակը, որ աշխատուած էր Տիար Համբարձում Հալահեանի հսկողութեամբ եւ գեղարուեստական իրագործումովը Օր. Միլվա Ճամպազեանի:

ՄՏԱՀԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ

(ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԵՐՈՌԻ ԱՌԻԹՈՎ)

Կիրակի օրերը Ս Պատարագէն ետք տեղի կ'ունենան Աստուածաշուն, յ սերտողութեան եւ ընդհանրական աղօթքի պահեր, մէկ ժամ տեսողութեամբ: Կը յիշեցնենք որ Ս. Թադէոս Եկեղեցի կամարներու ներքեւ, 1997-1998 տարիններուն տեղի ունեցան Քրիստոնէական գիտելիքներու ուսուցման դասընթացքներ, աղօթքներու եւ շարականներու ուսուցում երեխաններու, պատանիններու եւ երիտասարդներու: Տրագուած էր ուստագնացութիւն՝ Ցորդանանի տարածքին գտնուուր Քրիստոնէական սրբավայրերը: Փորձեր կատարուացան կազմելու Եկեղեցւոյ երգչախումբը, կատարելագործելու Ս. Պատարագի երգեցողութիւնը, ներգրաւելով կարող ուժեր: Այս առթիւ կ'ուղենք մեր մտահոգութիւնները քածնել ձեզ հետ:

Դժբախտաբար, վերյայշեալ գրեթէ որոր ձեռնարկումները չ'ամբողջացան, քեւ ունեցան իրենց դրական արդիւնքները, սակայն կ'ակնկալէնք աւելին: Ի մասնաւորի շափականները չցուցարերեցին՝ անհրաժեշտ եռանդն ու պատրաստակամութիւնը: Նոյնիսկ այն անձնենք կամ խումբերը որոնց խնդրանքով կը սկսուին կրօնական ուսուցումները՝ կը գտնուին ան հետեւողական, անտարբեր, կը բացակային հանդիպումնեւն: Իսկ ծնողներ կը զլանան և նոյնիսկ արձակուրդի օրերուն - իրենց զաւակները առաջնորդել Եկեղեցին:

Կը ստիպուինք մտածելու, քէ պահանջենքները հանդէկ մեր Եկեղեցւոյ միայն առիթներ են խօսելու, ըսի-ըսամներու: Եթէ հաւատացեալներ պահանջենքն ունին Եկեղեցին, Եկեղեցին ալ իր պահանջենքները ունի իւր զաւակներէն: Մենք պարտաւորութիւններ ունինք միմեանց հանդէպ:

Եկեղեցին մեր միութիւնն է, հաւատացեալներու ժողովն է. եւ անոր գլուխը Ցիսուս Քրիստոսն է: Ամէնքս ալ իրաւունք ունինք արդարամտութեամբ քննադաշտելու եւ միեւնոյն ժամանակ պարտականութիւն ունինք սրբագրելու, օգնելու, գործակցելով հոգեւոր դասին հետ ծառայելու Հայ Առաքելական Եկեղեցւոյ պայծառացաման ու բարգաւանման: Գաղտնիք չէ, որ մեր մէջ կան անձեր, ընտանիքներ, խումբեր որոնք զանազան պատճառարաններով կը հեռանան մայր Եկեղեցին եւ ուրիշ շասեր ալ իրենց հետ կը հեռացնեն: Ուրիշ, իրենց տուննեն Հայո՛ւ տուննեն: Այսպիսինները, Անառակ Որդիի նման քերահաւատ եւ անգիտակից են իրենց Հօր տան՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ անփոխարինելի դերի ու նշանակութեանը, հոգեւոր, ազգային եւ համայնքային կեանքի բազմազան մագիստրուսները:

Ա.Ր.Ա.Ր. @